

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՒԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն դիրքով և Նոյն պրոպրիետարով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱՎՈՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարյանի տանը).

Կայտարարութիւններ ուղարկելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտատպանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով.

Մշակի առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագրիչների յայտարարութիւնները, մասնաւորապէս կապաւորուած հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում Մասնաւորապէս տպագրելու առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քսան երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագր.-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆ

ԲՈՒԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսի ընտրութեան խնդիրը. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջորջ Զուլու. Նամակ Բաթումից. Նամակ Սիմֆերոպոլից. Նամակ Եւզու. Նամակ Խմբագրի. Նամակ Խմբագրի. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց չայաստանից. Յոյսեր անգլիացիների դէմ. Կատարի մասը. Արտաքին լուրեր. — ԽԱՆԻՆ, ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎՈՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՏՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Անդառնալի կերպով անցան այն օրերը, երբ քարոզում էին թէ Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը մի աշխարհային, քաղաքական կամ հասարակական ընտրութիւն չէ, այլ մի այնպիսի ընտրութիւն, որ բարձրից է գալիս:

Ներկայումս կաթողիկոսական ընտրութեան գործում մասնակցում է ժողովուրդը գիտակցութեամբ և ընտրում է նրան կաթողիկոս, որին նա արժանաւորագոյն է համարում և առաջարկում է ի հաստատութիւն Թաղաւոր Կայսրի: Մեր այդ խոսքերը հիմնված են ժողովրդական ընտրութեան սկզբունքի վրա, որի վրա հիմնված է և Հայրապետի ընտրութիւնը: Դա տեղը առարկում են, թէ կաթողիկոսի ընտրողը ժողովուրդը չէ, այլ հոգեւորականութիւնը, քանի որ ընտրութեան գործում հոգեւորականութիւնը աւելի շատ ձայն ունի:

Մենք այդ միտքը համարում ենք սկզբունքի տեսակետից, անհիմն:

Նախ մի քանի խօսք ընտրողական ձայների ցուցակի մասին:

Հայոց կաթողիկոսի ընտրութեան մասնակցում են բոլոր տեղերի հայերը, թէ ռուսահայերը, թէ պարսկահայերը և թէ թիւրքահայերը: Ռուսահայերը և պարսկահայերը (որոնց մէջ մենք հաշուում ենք և Հնդկաստանի հայերին) մասնակցում են կաթողիկոսական ընտրութեան իրանց ջոկ-ջոկ պատգամաւորներով, ուղարկելով իւրաքանչիւր թեմից մի աշխարհական և մի հոգեւորական պատգամաւոր: Միայն թիւրքաց Հայաստանը, ինչպէս ցոյց է տալիս վերջին կաթողիկոսների ընտրութիւնները, շեղվել է այդ ծանապարհից: Իսկապէս, թիւրքաց հայերը և Կ. Պոլսի, իբրեւ հայկական մի մեծ կոյտիս, որը ազդեցիկ գեր է կատարում թիւրքաց Հայաստանի եկեղեցական և հոգեւոր գործերում՝ սահմանափակ ընտրութեան շնորհիվ, պէտք է ուղարկեն էջմիածին, ժողովրդական ընտրութեան ըսկզբունքը չը խախտելու համար, իւրաքան-

չիւր թեմից մի աշխարհական և մի հոգեւորական պատգամաւոր: Սակայն, զրա փոխարէն, Կ. Պոլսի պատրիարքարանը և ազգային ժողովը, իրանց համարելով օրինական ներկայացուցիչ թիւրքաց Հայաստանի, փոխանակ իւրաքանչիւր թեմից երկու-երկու մարդ ուղարկելու, ամբողջ ազգային ժողովի կողմից ուղարկում են էջմիածին երկու հոգի, մի աշխարհական և մի հոգեւորական, որ նրանք ազգային ժողովի, ուրեմն և իրանց կարծիքով, թիւրքաց հայերի կողմից մասնակցին կաթողիկոսի ընտրութեանը: Օրինակ, 1866 թ.ին Գեորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ Կ. Պոլսի ազգային ժողովը ուղարկել էր երկու հոգի՝ հանգուցեալ Ներսէս պատրիարքին և Յակոբ էֆենդի Նորատունկեանին: Նրանց յետոյ անմահ Ներսէս վարժապետեանի և Մակարի ընտրութեան ժամանակ Կ. Պոլսի ազգային ժողովը յատուկ պատգամաւորներ ուղարկեց, այլ իր ձայները ուղարկեց էջմիածին՝ ներկայացուցիչ նշանակելով էջմիածնում գտնվող այս և այն հոգեւորականին:

Այս տարի, ինչպէս երևում է, թիւրքաց Հայաստանը արամադիր է օգուտ քաղել իր իրաւունքից և անմիջապէս մասնակցել կաթողիկոսի ընտրութեան, ուղարկելով իր սեփական պատգամաւորներին, — մի քայլ, որը շատ ցանկալի է:

Եթէ այդ մտադրութիւնը իրագործվի, մենք կունենանք էջմիածնում, մայիսի 3-ին հետեւեալ ձայները.

Ռուսաստանից	
էջմիածնի սինոդը ունի . . .	8 ձայն.
էջմիածնի միաբանութիւնը . .	7 "
6 թեմերի հոգեւորական պատգամաւորներ	6 "
6 թեմերի աշխարհական պատգամաւորներ	6 "
Ընդամենը	27 ձայն.

Պարսկաստանից	
Ատրպատականի հոգեւոր պատ.	1 ձայն.
Ատրպատականի աշխարհ. պատ.	1 "
Հնդ.-Սպահանի հոգեւոր պատ.	1 "
Հնդ.-Սպահանի աշխարհ. պատ.	1 "
Ընդամենը	4 ձայն.

Թիւրքիայից	
Առաջնորդական 45 թեմերից մի-մի հոգեւորական և մի-մի աշխարհական պատգամաւորներ	90 ձայն.
Բոլոր ձայները միասին	121 ձայն.

Ուրեմն, եթէ թիւրքային հայերի կողմից էլ դան պատգամաւորներ, այն ժամանակ

Հայոց կաթողիկոսի ընտրութեանը ազդը կը մասնակցէ 121 ձայնով:

Դրանցից 68 հոգեւորականների ձայներ են, իսկ մնացած 53 ձայները աշխարհականների ձայներ են: Պարզ երևում է, որ հոգեւորականների ձայները աւելի շատ են, և ահա այդ հիման վրա կան առարկողներ, ինչպէս վերեւ յիշեցինք, թէ կաթողիկոսի ընտրողները ժողովուրդը չէ, այլ հոգեւորականներ: Գործնական տեսակետից այդ կարծիքը համոզիչ էր թվում, մանաւանդ այն տեսակ ընտրութեան ժամանակ, որը տեղի էր ունենում վերջին տարիներս էջմիածնում, երբ թիւրքաց հայերի կողմից պատգամաւորներ չէին գալիս: Եւ ճշմարիտ, էջմիածին եկած (բացի թիւրքաց հայերից) իսկական պատգամաւորներից, այն է, Ռուսաստանից—27, Պարսկաստանից—4, Բոլորը միասին 31 պատգամաւորներից՝ միայն 8 են աշխարհական, մնացած 23 հոգեւորականներ են, ուրեմն հոգեւորականները միշտ կարող են գերակշռող և վճռական դեր կատարել:

Սակայն խնդիրը նրանում է, թէ արդեօք Հայոց եկեղեցու ոգին և Հայոց հոգեւորականութեան ու ժողովրդի մէջ եղած յարաբերութիւնը ինչ պարագայում է դրնում հոգեւորական պատգամաւորների վրա, երբ նրանք մասնակցում են կաթողիկոսի ընտրութեան:

Արդեօք հոգեւորական պատգամաւորը բարոյական իրաւունքի տեսակետից ձայն պէտք է տալ այն կաթողիկոսացուին, որին ինքն է կամենում, թէ այն կաթողիկոսացուին, որին ժողովուրդն է ուզում:

Մենք այդ հարցին կը պատասխանենք յաջորդ յօդուածում:

Խ. Ս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՐԻ ՀԱՐՅՈՒ ՇՈՒՇՈՒՄ

Շուշին կազմված է հայերից և թուրքերից, որոնք առանձին-առանձին թաղերում են ապրում: Թուրքերի թաղում կան մի քանի աղբիւրներ, իսկ հայերի թաղում չը կան ամենին: Այդ պատճառով քաղաքին հայ ազգաբնակչութիւնը, մանաւանդ ոչ-ունեւորները, սաստիկ նեղութիւն են քաշում ջրի պատճառով: Հայերը ջուրը բերում են թուրքերի թաղի աղբիւրների մէկից: Այդ ջուրը առողջարար չէ համարվում, ուստի ունեւոր հայերը իրանց համար ջուրը բերել են տալիս քաղաքից դուրս գտնվող հեռու աղբիւրներից: Բացի դրանից այդ աղբիւրի ջուրը չուտաւ կտրվում է, մասնաւոր ամառը, որով չքաւոր դատակարարը տաքնապի մէջ է ընկնում: Պարզ է, որ քաղաքին հայ ազգաբնակչութեան համար անհրաժեշտ է մի աղբիւրի ջուր բերել հայերի թաղը:

Դեռ 83 թվականից շուշեցի հայերը մտադիր են քաղաքից մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող մի աղբիւրի ջուր բերել քաղաքը: Դրա համար հանգանակութիւն է եղել, յետոյ էլ նուէրներով լրացել է այն գումարը, որ հարկաւոր է ջուրը բերելու համար: Ուրեմն փող կայ ջուրը քաղաքը բերելու համար: Բայց մի հանգամանք արգելք է լինում մինչև այսօր ջուրը քաղաքը բերելու: Բանը նրանում է, որ աղբաբնակչութիւնը կամենում է, որ քաղաքի կարգաւորութեան տակ լինի աղբիւրը, իսկ իշխանութիւնը կամենում է, որ այդիցիայի ձեռքին լինի: Իշխանութիւնը կը ստանայ այն ժամանակ աղբիւրը այդիցիայից կանցնի քաղաքային վարչութեան ձեռքը: Բայց առանց այն էլ, ինքն ըստ ինքեան, երբ քաղաքը ինքնավարութիւն ստանայ, աղբիւրը քաղաքային վարչութեան ձեռք կանցնի: Այս պատճառով աղբիւրի ջուրը քաղաքը բերելը

արգելք է հանդիսանում Հասարակութիւնը այժմ խնդիր է տալիս նահանգապետին, որ թող տայ աղբիւրի ջուրը քաղաքը բերելու այն պայմանով, որ աղբիւրը քաղաքի կարգաւորութեան տակ լինի: Յոյս կայ, որ պ. նահանգապետը կը յարգի քաղաքին ազգաբնակչութեան խնդիրը:

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՄԻՑ

Փետրվարի 4-ին

Ներկառթի երեկոյեան, ժամը 8-ից յետոյ, քաղաքում սկսվեց սարսափելի մրրկի մէջ չը տեսնված փոթորիկ էր: Քամին դէն գցեց շատ տների ծածկեր, ջարդեց բազմաթիւ պատուհաններ և տախտակէ ցանկապատեր: Ծովում խորտակվել են բեռներով միասին Շահադեանին պատկանող հինգ շուտաններ, անհետացել է մի նաւը: Իր մարդիկներով, ոչնչացել են փողորկ նաւակներից շատերը: Սակայն քամու արածը բոլորը այդ չէր: Տեղական երկաթուղու նոր շինված կայարանում կանգնեցած է եղել առանց «տօրմաղի» մի դատարկ վագոն. քամին սաստիկ արագութեամբ քշել է այդ վագոնը դէպի քաղաք, տակը գցելով պատահած մարդկանց: Սպանվել և վիրաւորվել են 6 հոգի. դրանցից երկուսը մեռել են արդէն. մէկը վերք թեթև է. իսկ երեք հոգի ծանր վիրաւորված պառկած են հիւանդանոցում: Մէկը վրայով անցել է վագոնը գցելով նրան երկու ընկերների մէջ, առանց վնասելու: Նրան գտել են այդտեղ ուշաթափ դրութեան մէջ: Սպանվածների մէջ է նաև մի շուշեցի հայ դերձակ, որը մի քանի տարի Բազուից այստեղ տեղափոխվելով պարագում է եղել իր արհեստով և դրանով կերակրում մի անգին ընտանիք: Հետաքրքիր էր իմանալ, կը վարձատրէ արդեօք երկաթուղու վարչութիւնը այդ խնդրին, որոնք, նրա ծառայողների աններելի անհոգութեան պատճառով, մեռել են այսօր առանց օգնութեան և օրվայ հացի կարոտ:

Կերակի օր կայացել է այստեղ դաւառական պատգամաւորի ընտրութիւնը: Ընտրվել է ձայների մեծամասնութեամբ պ. Արշակ Մատուռեան:

Ա. Ապ.

ՆԱՄԱԿ ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ

Յունվարի 28-ին

Այսօր այստեղի քաղաքային խորհրդի (դումայի) դահլիճի մէջ կատարվում էր հրէաների արքունի նախնային ընտրութիւնը, որի պաշտօնա համանուն և հաւասար է քրիստոնէական քահանայի պաշտօնին:

Յիշեալ դահլիճը կէսօրից մինչև գիշերվայ 1 ժամը լցված էր զանազան կարգի հրէաներով: յիշեալ տան առջևի տրոտուարը և մասամբ փողոցը ամբողջ այդ ժամանակը բռնված էր նրանցով և շրջակայ փողոցներում անցնողների մեծ մասը նրանք էին: Այդ ժամանակ իր տնից կամ բնից դուրս էր եկել ամեն մի չափահաս հրէայ և գալիս էր ընտրութեան տեղը: Նրանք ամեն տեղ դրաղված էին խօսակցութեամբ կամ վիճաբանութեամբ: Միանգամայն դարձնելով օտարներ իրանց վրա և երևում էր, որ նրանց զբաղեցրել է մի շատ հետաքրքիր և հարկաւոր հարց:

Ինչպէս իմացայ ես հաւաստի աղբիւրից, ընտրութիւնը կատարվում էր քաղաքապետի և մի քանի պետական պաշտօնականների ներկայութեամբ և նրանց հսկողութեան տակ՝ քուէներով: Գուէն արկել կարող է ամեն մի հրէայ, որը քաղաքացիական իրաւունքներից զրկված չէ և ունի պաշտօնին համապատասխան կրթութիւն: Այդ պարագան ընտրվում է 3 տարի ժամանակով և ստանալու է 1200 ռուբլի տարեկան ռոճիկ:

Աւելորդ չէ ուղք դարձնել այդ դէպքի վրա, տեսնելու համար թէ ինչ մեծ տարբերութիւն

կայ մեր հայերի քահանայ ընտրելու և հրէաների
աւարտի ընտրելու եղանակի մէջ, քանի որ քահա-
նայ ընտրվելու համար միջանոց քաւական է քիչ
ուսում ունենալ և զոնէ դուռ ընկնելով, ձեռք
ու ոտք պագնելով, խոստումներ կամ երկիւղ ու
սպառնալիքներ տալով, ստորադրելով և ամենայն
անհրաժեշտութեան համար ծախսականները և ներկայանալ
ձեռնադրվելու:

Այդ նկատողութիւններն օրինակներ հարկա-
ւոր չեն. ամեն հայ ծխական կարող է միտը ըն-
դել թէ ինչպէս է եղել իր քահանայի կամ երեց-
փոխանի ընտրութիւնը, իսկ ես, իբրև Սիմֆերո-
պոլի ծխական, լաւ յիշում եմ, թէ ինչ կեր-
պով ընտրվեցան անցեալ տարվայ մէջ մեր
երեցփոխանը և զարմացեալ և թէ 200 տուն
ժողովրդից միայն մօտ 20 մարդ էր մասնակցում
ընտրութիւններին:

Հ. Կ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Փետրվարի 2-ին

Երէկ և այսօր քաղաքին չորս եկեղեցիներում
կատարվեցան ծխական պատգամաւորների ընտ-
րութիւնները: Մենք ներկայ էինք մի ընտրու-
թեան, որ կատարվեց Ղազանցից մեծ եկեղե-
ցում և զոհոթեանը կարող ենք արձանա-
գրել, որ գոնէ այս անգամ ընտրութեան սկզբ-
բունքը չէր խեղդված: Ամեն ինչ կարգին անցաւ:
Թէև տեղին թեմական իշխանութիւնը բացորոշ
հրահանգ չէր տուել ընտրութեան եղանակի մա-
սին, բայց հաւաքված ժողովուրդը շատ արդար
համարեց թիֆլիսի եկեղեցիներում ընդունած
կարգը, որ լաւ յայտնի էր «Մշակից»: Այդ կար-
գով էլ կայացաւ ընտրութիւնը: Իւրաքանչիւրը
ազատ կարողութիւն ունէր առանց այս ու այն
մարդու չունչի ազդեցութեան տակ ընկնելու
ձայն տալ. և այդպէս էլ կարաւ ընտրութիւնից
առաջ շուրջ տարածվեց թէ մեր եկեղեցում
«պաշտպանն» քրէ թագուն թղթիկ են բա-
ժանել, մարդկանց ակնաչին խօսքեր են փոխա-
ցել, և այդ հանգամանքը հարկադրեց աւելի ա-
շտուրջ և խիստ լինել ընտրողական կարգերը
անթիւրի կատարելու համար:—Այդ ուրախալից
երևոյթ է, այդպիսի քայլերով են հասնում ինք-
նաճառագործեան, այդպիսի վարժանքով կարելի
է ապացոյցանել, որ ընտրողութեան գեղեցիկ և
մեծիմաստ իրաւունքը գիտակցաբար գործադրե-
լու ցանկալի ժամանակին ենք հասնում:—Խղիւրդ
այնքան է վերաբերվում ընտրութեան տուած
հետեւանքին, որքան ընտրողական սկզբունքին,
հոգուն:

Մի բան միայն շատ էր աչքի ընկնում: Ղա-
զանցից եկեղեցին ունի 600 տուն ժողովուրդ,
բայց ընտրութեան ներկայ էին միայն 108 հո-
գի: Այդ, ի հարկէ, անչափ թիւ է: Եւ մասնա-
կողմերի թիւի սակաւութիւնը կարելի է համարել
այդ ընտրութեան պակասութիւնը:

Շուշու եկեղեցիներին, Նուխու վիճակի և գիւ-
ղերի ծխական պատգամաւորները ամսին 14-ին
պիտի միասին հաւաքվեն և ընտրեն թեմական
պատգամաւոր:—Առ այժմ չէ կարելի պսել թէ
ո՞վ կընտրվի, թեմական պատգամաւոր: Բայց ո՞վ
որ լինի, նրա ետևում կանգնած է արդէն կազ-
մակերպված հասարակական կարծիք կաթողիկո-
սական ընտրելիների մասին: Ղարաբաղի թիւի
աշխարհական պատգամաւորը պիտի լինի. այդ
կարծիքին, այդ ընդհանուր ցանկութեան ճիշդ
թարգմանը: Անորոշ, անայտ, անուններ այս-
տեղ յայտնի չեն: Կաթողիկոսական ընտրե-
լիների անունները արտասանվում են պարզ
անաղարտ: և ո՞վ լսելու ընդունակութիւնից զուրկ
չէ, կատէ որ այդ անունները հէնց այն անուններն
են, որ հռչակել է «Մշակը»:—Թող ընդդիմաբո-
սեն, թե՛ անուանարկեն նրանք, որոնք այդ հար-
կաւոր են համարում: Բայց մաքուր հաւատը
անկեղծ ցանկութիւնները չեն խաբի մարդկանց
և յոյսերը, այդ ծանր ու բարդ յոյսերը, կը կնի-
դանանան այդ մաքուր հաւատից, անկեղծ ցան-
կութիւններից, կիրականանան մեր աչքի առաջ:
—Թող ընտրելին լինի ժողովրդական և ժողովր-
դական համակրութիւնը կը մնայ իբրև մի անկա-
շառ դատաւոր: որ ընտրածին ցոյց կը տալ ձա-
նապարհ, ցոյց կը տալ ուղղութիւն:

Մնում է, ուրեմն, որ Ղարաբաղի ծխական
պատգամաւորները, լաւ ըմբռնելով ժամանակի
խորհուրդը, ընտրեն թիւի կողմից մի լրջամիտ,

աղղեցիկ և հաստատամիտ մարդ, որ գնայ էջ-
միածին և աղղի ընդհանուր ընտրողական ժողո-
վին ներկայացնէ թեմի ցանկութիւններն ու սի-
րած անունները:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Ս. Էջմիածին, 1 փետրվարի

Թիւր ատեւը, խնդրեմ, ուղղել մի երկուսիսայ,
որ մուտք են գտել «Մշակի» № 11-ի «Նկատու-
թեաններ» վերաբերող յօդուածում: Պ. Լէօն,
յօդուածի արդոյ հեղինակը, խօսելով ս. Էջմիած-
նի նոր կարգերի մասին՝ ասում է. «նոր կարգե-
րի հեղինակաւոր և աղղեցիկ մարդն է զեր.
Արեւստակէս եպիսկոպոս Սեդրակեան»: Այնտեղ,
ուր կայ իշխանութիւն, ամէն գործ և կարգա-
դրութիւն իշխանութիւնից է բխում: մասնաւոր
անձինք նշանակութիւն չունեն, հետեւաբար՝ եթէ
այժմ մայր աթոռում նոր կարգեր են տիրապե-
տում, այդ բոլորը պարտական ենք ամենապա-
տիւ սրբազան Տեղակալի հեղինակաւոր հոգա-
տարութեան ու բարեխնդր ուղղութեան և ս. սի-
նոդի համարաչին գործակցութեան. իսկ «Արա-
տի» բարեխոնդութիւնը—միայն ս. Տեղակալի
և նորերում խմբագրի օգնական կարգված միա-
բանի, ուսումնական երիտասարդ զպիր Գալուստ
Տէր-Մկրտչեանի խնամքին և աշխատութեան:

Արեւստակէս եպիսկոպոս Սեդրակեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, փետրվարի 7-ին

Թէ որքան ճիշդ է, չեմ կարող ապահովել, մի-
այն ժողովրդի մէջ տարածվել է, որ ամսին 2-ին
Հաւաքարի հայ եկեղեցիներում կայացած ընտ-
րութիւնները իբրև թէ անվաւեր են համարված:
Եւ չէի ցանկանայ մի խօսք անգամ ասել, բայց
աչքի առնել ունենալով, որ յաճախ կրկնված ուս-
տը վերջի վերջոյ ճշմարտի տեղ է անցնում,
այս պատճառով բարեւոք եմ համարում քանի մի
խօսքով նկարագրել Շաւրոսեցի եկեղեցում ընտ-
րութիւնը: Ամսին 2-ին, կիրակի օր, ուղիղ ժամի
12-ին, աւագին բազմութիւն էր խառնվել եկեղե-
ցում բազում նախագահ քահանայ տէր-Համա-
ղասոյ հայրը բարձրացաւ ծխական ուսումնա-
րանի վերին յարկը տանող սանդուղքի վրա.
մօտը կանգնած էր մի վարժապետ, որը ցու-
ցակը ձեռքին, ծխականներին անուններն էր կար-
գում: Իր ամենը լսող ծխականը բարձրանում
էր դէպի վեր և տիրացուից ստանալով մի տու-
սակ՝ մտնում էր ուսումնարանի դահլիճը, որի
դրան մօտ նստած քանի մի մարդիկ, գրում էին
նկար կնիքի անունը: Հաւաքվել էին ընդամենը
148 հոգի, նախագահ քահանան կարդաց հրա-
հանքը, որի աւարտումից յետոյ առաջարկեց հան-
դիսականներին գրել իրանց ուղած մարդկանց
(երեք հոգում) անունները առած թիւթիկի վրա
և գցել սեղանի վրա դրած թիթեղաշտ տուփի մէջ:
Երբ բոլորը գրել էին իրանց թիթիկը (մանրա-
մասնները աւելորդ եմ համարում)՝ նախագահ քա-
հանան հանում էր մի առ մի և կարդում: Հետե-
ւանքն այն եղաւ. 81 ձայն ստացաւ եկեղեցու
երեցփոխան պ. Գրիգոր Ղարաբեղեան, 75
ձայն պ. Յովհաննէս Թալիբեան և 72 ձայն
պ. Արշակ Ղոնդախաւեան: Զորքորք անձը, պ.
Աղա Ղարաբեանն էր, որը նոյնպէս 72 ձայն
ստացաւ. բայց տարաձայնութիւններին տեղիք չը
տալու համար վերջին երկու պարուններն մէջ
վիճակ դրեցին և վիճակը պ. Արշակ Ղոնդախա-
ւեանին ընկաւ: Ահա այս է իսկական և անխա-
ղախ եղելութիւնը:

Ծխական

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Մոսկովա, յունվարի 28-ին

Մտադիր լինելով հրատարակել մեր մեծայարդ
աղգային բանաստեղծ Գաբու-Քաթիկայի բոլոր
միջև այժմ լոյս տեսած, տալաւն անտիպ մնա-
ցած և վերջերս գրված ռոմանտիկները առան-
ձին գրքով և ցանկաւով կարելոյն չափ լիա-
կատար անել այդ հրատարակութեան—պատիւ
ունեն ձեռն պատմական լրագրի միջոցով դիմել
բանաստեղծին բարեկամ և նրա տաղանդը յար-
գող այն անձինքներին, որոնց մօտ կարող են
գտնվել դեռ չը տպված նրա բանաստեղծութիւն-
ներից, այդպիսիներին խոնարհաբար խնդրելով

ուղարկել ինձ դրանց, որոնք և՛ արտագրելուց
յետ, անմիջապէս կուղարկվեն ըստ պատկանե-
լոյն խորին շնորհակալութեամբ:

Հրատարակութիւնը ձեռնարկվում է միծարգոյ
բանաստեղծին օգնականութիւն հասցնելու նպա-
տակով, ուստի և ամբողջապէս նուիրվում է նրա
օգտին: Իմ հասցէն. Մոսկովա, Լադարեան ձեռնա-
րան:

Տ. Վառվառէ Քանանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին
հետեւալ անձինք ուղարկել են մեզ հետեւալ գու-
մարները. Բաղուրից Աւետիս Արուսեանց 5 ռուբլի,
Թիլիսից Գեորգ աւագ քահանայ Տէր-Սարգսեանց 10
ր., Մարտիկից Ս. Մ. 10 ր., Նիւնովի գիւղից Ա.
Վարդապետեանց, Հ. Բուրապետեանց, Կ. Բուրա-
պետեանց, Ս. Նիկողոսեանց, Ս. Ղարաբեկեանց, Ա.
Տէր-Գրիգորեանց, Յ. Աղապետեանց, Կ. Սեփա-
նեան, Ա. Վարդապետեան, Հ. Առաքելեան, Յ. Տէր-
Մկրտչեան, Զ. Ղուկասեան, Ե. Ժամարեան, Յ.
Ղուկասեան, Գ. Սարգսեանց, Գ. Բուրապետեան,
Ս. Սարգսեանց, Գ. Յարութեանեան, Մ. Զար-
պետեան, Գ. Յովսէփեանց, և Գ. Կիրակոսեանց՝
միասին 11 ռուբլի 65 կօպ., ուրեմն ընդամենը
36 ր. 65 կօպ., իսկ նախկին 2228 ր. 48 կ.
գումարի հետ ունենք այժմ 2265 ռուբլի 13
կօպէի:

Ամենահաստատ աղբիւրներից տեղեկացանք,
որ կաթողիկոսական տեղակալ, Երեմիա սրբա-
գան, հեռագրով պատուիրել է Թիֆլիսի թիւթի
առաջնորդին չը յետաձգել Մայրանի Ս. Գեորգ
եկեղեցում և Նաթլուգի եկեղեցում կատարվելի-
կ եկեղեցական պատգամաւորների ընտրութիւննե-
րը, այլ անշաղկապ կատարել առաջ այդ ընտրու-
թիւնները:

Յունվարի 6-ի աղետի գործը քննելու համար
Էջմիածնից եկած քննիչ յանձնաժողովը, վերջապե-
րած լինելով իր պարագմունքները՝ փետրվարի
6-ին ուղևորվեց Էջմիածին:

Այսօր, փետրվարի 8-ին, շաբաթ օր, Թիֆլիսի
Արքեպիսկոպոս թատրոնում կայանալու է օպերա-
ների կտորներից և Գրիգորեանի «Գործ օտե յմա»
պիէտայի մի ակտից բաղկացած ներկայացումը:
Թիֆլիսի ուսանող Բաքիգործական ընկերութեան
նախաձեռնութեամբ հիմնվող կօմա ճաշարանների
օգտին: Ներկայացմանը մասնակցելու են՝ Թիֆլիսի
Ֆլաշա, Թիֆլիսի Պէրլին, պ. պ. Վանդերլի, Ֆրան-
կուլի, Բիւլի, Կորիճէ, Կատէլի և այլն: Անտ-
րակցական բացված կը լինի բոլորէն Ռուսաս-
տանից մեր երկրը գաղթող սովետական օգտին:
Սկզբը 7 1/2 ժամին:

Թիֆլիսում երկար տարիներ ապրող իտալացի
երաժիշտ պ. Պելլիսո դրել է Յունվարի 6-ի աղե-
տի յիշատակին մի երաժշտական հեղինակութիւն
պիտիօի համար «Gavotte Terpsichore» վերնա-
գործ: Հեղինակը դիտաւորութիւն ունի շուտով
տալաքիլ իր գրութեանը և այդ իր նօտաների
վաճառումից գոյացած արդիւնքը մի մասը նուի-
րել աղետից վնասվածների օգտին:

Ժամանակով անշուշտ կը վերադառնանք վեր-
ջին ընտրութիւններին և մի առ մի կը թեմնը
այն բոլոր միջոցները, որոնց դիմած են մեր
հակառակ կուսակցութիւնները, որպէս զի «ի-
րանց» մարդկանց ընտրել տան, իսկ առ այժմ
այստեղ առաջ ենք բերում մի վերջին հայելու:
«Իրան» ընտրված են բացառապէս հինգ եկե-
ղեցիներում, իւրաքանչիւր եկեղեցում 3 մարդ,
ընդամենը 15 մարդ. Թանդուկեանց, Կուկիայի Նո-
րաչէն, Զուրկուլեթի, Վերայի գերեզմանատան և
Հրեշտակապետաց եկեղեցիներում. բոլոր 5 եկեղե-
ցիներում մասնակցել են ընդամենը մօտ 120
ընտրող և ընտրվել են միայն մի քանի ձայների ա-
ռուելութեամբ, անկէ՛ք ոչ բոլոր 120 մարդ
են միաձայն կամեցել ընտրված տեանը յայտնի
անձանց, այլ այդ 120-ից միայն 70—80 մարդ:
Եթէ արան աւելացնենք, որ վերոյիշեալ եկեղեցի-
ներում եղած ընտրողների եթէ ոչ 2/3 մասը, գոնէ
առնուազն կէտը անգրագէտ են եղել, ուրեմն
պարզ է, որ մեզ հակառակ կուսակցութիւններին
պատկանող 15 ընտրված պատգամաւորներին
ընտրել են մօտաւորապէս 35—40 զբաղեւ ընտ-
րողներ, որոնց թիւում պէտք է հաշուեն նոյն իսկ
ընտրված անձինքներից գոնէ 10-ին, որոնք նոյն-
պէս մասնակցել են ընտրութիւններին, որպէս
ընտրողներ: Այս բոլորը պարզ է, որ մեզ հա-

կառակ կուսակցութիւններին պատկանող 15
պատգամաւորները ոչ այլ ինչ են, եթէ ոչ 25—
30 զբաղեւ հայերի ընտրեալները: Այն ինչ
եթէ վերցնելու լինենք Հաւաքարի եկեղեցիները,
օրինակի համար, Էջմիածնից եկեղեցու ընտրու-
թիւնները, կը տեսնենք, որ այստեղ ընտրված
են մէկը 110, երկրորդը 120 և վերջապէս եր-
րորդը 134 ձայնով:

Մոսկովայից ստացված և վաճառահանված
«Հրատարակական ընկերութեան» լոյս ընծա-
յած «Բը-Ա-Բա» գեղեցիկ գրքովը, որը պատկա-
նում է Էլիզա Օմէշկովի գրչին: Գրքովը արժէ
կարդալ:

Վենեցիայի Միխիլարեան միաբանութիւնից
ստացանք նրա հետեւալ հրատարակութիւնները.
1) Ղազար Փարպեցու պատմութիւն հայոց.—մի
գիրք, որ Միխիլարեանները անգաղար տպում ու
տպում, և երբեք չեն կշտանում: 2) Համառօտ
թուաբանութիւն, որ յօրինել է Մեսրոպ վարդա-
պետ Սահակեան, 3) Գալիտակութիւն հանդէպ
ժողովին Մօտա-Պոռնուի,—գա Բարսեղ վա-
րդապետ Սարգսեանի ոգևորութեան արդիւնք է,
որ կարդում է 64 երեսից բաղկացած մի
գիրք: և 4) Բայրօնից գրառու լեզուով թարգ-
մանած մի հատուած «Իտալիա» վերնագրով
անդլիկերէն լեզուովը և հայերէն թարգմանութիւ-
նը միասին տպած: Բոլոր գրքերն էլ տպված են
ներկայ 1892 թվին:

Փետրվարի 6-ին տեղի ունեցաւ այս օրերու
վախճանված Եզօր Փրիլգոսովի թաղումը, որին
վերջին յարգանք մատուցանելու համար՝ ներկայ
էին մեծ բազմութիւն: Հանգուցեալ մի բաւական
խոշոր գումար, աւելի քան 20 հազար ռուբլի,
նուիրել է զանազան հասարակական հիմնարկու-
թիւններին:

«Օրէանի կոյտի» երկրորդ ներկայացումը, որը
տեղի ունեցաւ փետրվարի 6-ին, աւելի էլ անա-
ջող անցաւ, քան առաջինը: Ընդհանուր տպաւո-
րութիւնը անտանելի էր ոչ թէ միայն այն պատ-
ճառով, որ այդ կուսակական պիէտան խաղաղում
է բոլորովին «ոչ-կուսական» կերպով, այլ և
այն պատճառով, որ մի քանի դերասաններ դե-
րերը չէին սերտել, և բնմ դուրս եկող նուագա-
ծուները և վրնուները չը գիտէին թէ ինչպէս
գնան, որտեղ կանգնեն: Աւելացրէք դրա վրա և
այն, որ կուկիաների ետեւից անգաղար լսվում էր
կարգադրողի ձայնը, մի քանի դերակատարներ
նոյն իսկ բնմ վրա ծիծաղում էին իրար հետ,—
և այն ժամանակ կը հասկանաք, թէ ինչու հա-
սարակութիւնը բոլորովին զգուհ դուրս գնաց
թատրոնից:

Առաջիկայ երկուշաբթի օր հայերէն մի ներ-
կայացում պիտի տրվի դերասանական խմբի այն
անդամների օգտին, որոնք առանձին բնէջիւ
չունեն: Գրանց օգնելու համար ցանկալի է, որ
թատրոնը լի լինի:

Կ. Պօլսից գրում են, որ մօտ ժամանակներս
պիտի ձեռնարկվի հայոց պատրիարքաբանի վե-
րաշինութեան, որի համար պատրաստ կայ մօտ
4000 օսմանան ոսկի:

Հաւաքարի Լուսաւորից եկեղեցում ծխական-
ները խնդրում են մեզ յայտնել, որ իրանց եկեղե-
ցուց ոչ ոք բացի Սպանդարեանից, բողոք չեն
ներկայացրել թեմական առաջնորդին փետրվարի
2-ի ընտրութիւնների իբր թէ անվաւեր լինելու
մասին: Ընտրութիւնները շատ անհաւանոր էին, ժո-
ղովուրդը իրան շատ լաւ էր պահում և կատարեց
ընտրութիւնները ամենայն ճշգրտութեամբ և կանո-
նաւորութեամբ, որը և վաւերացրեց ընտրողների
և քահանայի ստորագրութեամբ: Ընտրողների
թիւը 46 էր, դրանցից Աղապի Միլի-Ալիաշեան
ստացաւ 45 ձայն, Գաբրիէլ Իշխանեանց 44 ձայն,
Սարգիս Մանուկեան 43 ձայն: Միւս մի քանի
անձինք ստացան 3 ձայն, 2 ձայն և վերջապէս
Սպանդար Սպանդարեան 1 ձայն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ ԹԻՐԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պօլսից գրում են արտասահմանի մի լրա-
գրին. «Աղգային ժողովի նիստերն առ այժմ դա-

